| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմանների չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի դեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «ՅԱՆ ՇՈԻՋ» ՍՊԸ | 02291099 | ք. Երևան, Թումանյան 18ա | | | Համաձայն ՀՀ «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի և 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետի: | ՀՀ ՆԳՆ ՈՋ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ<br><br>Պատվիրատուի դեկավարի 22.02.2024թ. որոշման համաձայն |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**
**ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 2

## ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «22» փետրվարի 2024թ.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի և 6-րդ հոդվածի 6-րդ մասի «բ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության զորքերը որոշեց.

«ՅԱՆ ՇՈՒՋ» ՍՊ ընկերությանը ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ սույն ընկերությունը թեև ՀՀ ՆԳՆ ոստիկանության զորքերի կարիքների համար հագուստի և հանդերձանքի ձեռքբերման նպատակով 20.12.2023թ.-ին N «ՀՀ ՆԳՆ ՈԶ ԷԱՃԱՊՁԲ-24/9/Բ/1/ԻԾ» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի 14-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ չափաբաժիններով ճանաչվել է հաղթող մասնակից և օրենքով սահմանված անգործության ավարտից հետո՝ 23.01.2024թ.-ին, որպես ընտրված մասնակից վերջինիս տրամադրվել է պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը՝ էլեկտրոնային եղանակով, սակայն «ՅԱՆ ՇՈՒՋ» ՍՊ ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել պայմանագրի ստորագրված տարբերակը, պայմանագրի և որակավորման ապահովումները:

Պատվիրատուի ղեկավար՝

**ՀՀ ներքին գործերի նախարարության**
**ոստիկանության զորքերի հրամանատար,**
**ոստիկանության պետի տեղակալ,**

X

**գնդապետ** **Հ. Բաբայան**